# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Յունիս ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյս **Տնօրէն Ժողովը** ինը անգամներ ի նիստ գումարուեցաւ իբրև Վարչական Մարմին, **Կրօն. Գեր. Ատեանը**՝ հինգ անգամներ, իսկ **Ուսումն. Խորհուրդը**՝ մէկ անգամ։

● Շբ. 30 Մայիս. — Հոգեգալստեան վաղուի տօնին առթիւ, Կիրակամուտքը այս իրիկուն պաշտուեցաւ ի Ս. Փրկիչ, ուր «Հրաշափառ»ի թափօրը գլխաւորեց Տ. Մեսրոպ Սրբազան. իսկ գիշերը Հսկումի պաշտամունք եղաւ ի Ս. Յակոբ։

● Կիր. 31 Մայիս. — Տ. Մեսրոպ Սրբազան հանդիսիւ պատարագեց ի Ս. Փրկիչ, և քարոզեց «Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով» բնաբանին վրայ։ Նկարագրեց Ս. Հոգիին Պէնտէկոստէի հրաշքը. բացատրեց անոր խորհուրդը, առաքեալներու վհատած խումբը ոգևորելուն մէջ ցոյց տալով անոր մխիթարիչ զօրութիւնը, զոր միշտ ի գործ դրաւ յետոյ քրիստոնէական կեանքին մէջ. լեզուախօսութեան իրողութեան մէջ՝ Աւետարանին տիեզերականացումին խորհրդանշանը, իսկ հողմահնչիւն էջքին մէջ՝ ազդարարութիւնը այն հզօր առաջնորդութեան, որով անիկա միշտ վարեց Եկեղեցւոյ Նաւը։

● Դշ. 3 Յունիս. — Ամմանի Հովիւ Տ. Յակոբ Քհնյ. վերադարձաւ իր պաշտօնատեղին։

● Եշ. 4 Յունիս. — Տ. Հայկազուն Վրդ., որ երկու օր առաջ գործով եկած էր Յոպպէէ, վերադարձաւ։

● Շբ. 6 Յունիս. — Ժառանգաւորաց Հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ գրական երեկոյթ։

● Կիր. 7 Յունիս. — Ս. Պատարագը տեղի ունեցաւ Ս. Յարութեան մեր վերնայարկ մատուռին մէջ, ուր Տ. Հայրիկ Վրդ. քարոզեց օրուան աւետարանէն. Ներկայացուց մարգարէից բարոյացուցիչ դերը Իսրայէլի կրօնական և ազգային նկարագրի կազմութեան գործին մէջ, և հանգիտական ակնարկով մը անցնելով մեր հոգևոր կեանքին, մատնանշեց ոգին՝ զոր հոն կա, մարգարէական հոգւոյ տէր անձինք, Լուսաւորիչէն մինչև Խրիմեան, երևան բերին յաջորդաբար. և, կանգ առնելով ընտանեկան սրբութեանց առջև, յորդորեց ժողովուրդը՝ միշտ աւելի վերահաս լինել անոնց արժէքին։

— Իրիկունը, վաղուան Ս. Հռիփսիմեանց Նախատօնակը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետ։

● Բշ. 8 Յունիս.— Ժամերգութիւն և Ս. Պատարագ կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր ինչպէս երէկ երեկոյ, նոյնպէս այսօր, Միաբանութիւն եւ աշակերտք երգեցին հոգեզմայլ «Անձինք նուիրեալք»ը։ Ս. Պատարագէն ետքը, Ս. Պատրիարքը Տեսչարանին մէջ ընդունեց մայրապետ քոյրերը, և յորդորական և օրհնութեան խօսքեր ուղղեց ամէնուն։

● Դշ. 10 Յունիս. — Ասորւոց Եպիսկոպոսը իր փոխանորդ վարդապետին հետ այցելեց Ս. Պատրիարք Հօր։

● Եշ. 11 Յունիս. — Տ. Ասողիկ Վրդ., որ երկու օր առաջ եկած էր Յոպպէէ, վերադարձաւ։

● Շբ. 13 Յունիս. — Երէկ իրիկուն Նախատօնակով և այսօր առաւօտով և Ս. Պատարագով փառաւորուեցաւ Ս. Լուսաւորչի Մուտն ի Վիրապին տօնը. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Ստեփաննոսի Լուսաւորչի սեղանին վրայ. Միաբանութիւնը և ժողովուրդը մտեցան ի համբոյր Ս. Աջոյն։

● Կիր. 14 Յունիս (Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի). — Երէկ իրիկուն և այսօր Մայր տաճարի մէջ պատկառազդու վեհութեամբ կատարուեցաւ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ այս սիրալի տօնը, «Ուրախ լեր Ս. Եկեղեցի»ն երգուեցաւ սրտաթունդ. պաշտամունքին բոլոր մասերը կատարուեցան տպաւորիչ քաղցրութեան մէջ, խուռն ժողովրդի ներկայութեան։ Ս. Պատրիարքը քարոզեց իր աթոռէն. օրուան տօնը ներկայացուց իբրև տեսիլքներու տօն, տօնը իր տեսլականէն հրաժարիլ չգիտցող ժողովուրդի մը հոգևոր կեանքին. զուգակշիռը ըրաւ Զաքարիայի տեսիլքին, որ օրուան ընթերցուածին նիւթն էր, և Լուսաւորչինին, երկուքին մէջ ալ ցոյց տալով կրօնական և ազգային վերաշինութեան և վերականգնումի գաղափարային պատկերը. Լուսաւորչի տեսիլքին տարրերու դասաւորման մէջ ցոյց տուաւ Հայ Եկեղեցւոյ կազմակերպութեան և կեանքին պատկերը. պանծացումը ըրաւ այդ կեանքին, յորդորեց սիրել զայն ի սրտէ։

— Ս. Պատարագէն վերջը տեղի ունեցաւ հանդիսաւոր մաղթանք հայրապետական, Ս. Էջմիածնի տպագրեալ տետրակին համեմատ։

● Բշ. 15 Յունիս. — Տ. Յովհաննէս և Տ. Եսայի վարդապետք, որոնք առողջական պատճառներով, մին 8, միւսը 7 ամիսներէ ի վեր Երիքով էին, վերադարձան։

● Գշ. 16 Յունիս. — Տ. Մեսրոպ Սրբազան, Տ. Տիրայր Վրդ. և դիւանապետ Գ. Կ. Նուրեան, դատական գործով Յոպպէ գացին։

● Եշ. 18 Յունիս. — Տ. Տիրայր Վրդ. և Գ. Կ. Նուրեան վերադարձան Յոպպէէ։

● Շբ. 20 Յունիս. — Տ. Մեսրոպ Սրբազան վերադարձաւ Յոպպէէ։

— Իրիկունը, Ժառանգաւորաց Հանդիսարանին մէջ բանախօսեց Տ. Սերովբէ Վրդ., նիւթն էր՝ Հայ Երուսաղէմը, Թուրք տիրապետութեան շրջանի առաջին երկդարեակի միջոցին։

● Կիր. 21 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի մեր վերնայարկ մատրան մէջ, ուր քարոզեց Տ. Տիրայր Վրդ., և, նիւթ առնելով աւետարանի օրուան ճաշու ընթերցուածէն, բացատրեց կիրակիի սրբապահութեան քրիստոնէական սկզբունքը. ըսաւ թէ հանգիստը անձնական եւ աշխարհիկ զբաղումներէ հրաժարելով՝ Աստուծոյ եւ Աստուածային գործերու նուիրուած ներքին ապրումի և առաքինական աշխատութեանց մէջ պէտք է փնտռել։

● Գշ. 23 Յունիս. — Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ և Տ. Հայրիկ վարդապետաց և Գ. Կ. Նուրեանի, այսօր, Անգլիոյ Վեհ. Էտուըրտ Ը. Թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ, Սէնտ Ճօրճ եկեղեցին գնաց և մասնակցեցաւ Գոհաբանական մաղթանքին։ Յետոյ շնորհաւորութիւններ ներկայացուց Վսեմ. Բ. Գոմիսէրին, Եպիսկոպոսատան սրահին մէջ։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hayrik Aslanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.